ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-23/22 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
15	Կոշիկ սպայական	Ծանոթություն-տվյալ ապրանքը ապրանքային նշան չունի	Ծանոթություն-տվյալ ապրանքը մակնիշ չունի	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	15. Կոշիկ սպայական – Արտադրվում է բարձրակարգ խրոմե հարթ կաշվից, (արգելվում է օգտագործել սպիլոկ կամ խոզի կաշի): Կոշիկը բաղկացած է վերնամասից, միջատակից, հիմնական ներդիրից, արտաքին ներբանից (միաձույլ կրունկով ներբան): Կոշիկի երեսացուի կաշվի հաստությունը 1.5 – 1.7մմ: Վերնամասը բաղկացած է 7 դետալից, որոնք միանում են իրար զույգ կարերով՝ մշակված հատուկ զույգ կարի մեքենայով: Կարերի ամրությունը համաձայն ԳՈՍՏ 447՝

					պետք է լինի 115 Ն/սմ (կամ 11.5 կգս/սմ), փորձարկումը կատարվում է համաձայն ԳՈՍՏ 9292: Կրնկամասը՝ կոճերից ցածր, որը պետք է ծածկի ոտնաթաթի հետևի ամբողջ մակերևույթը: Կոշիկի կապումն իրականացվում է քուղերով: Միջատակը բաղկացած է իրար սոսնձով կարակցված բնական կաշվից /պադոշ/ և կոշիկի համար նախատեսված մինչև թաթը շարունակվող ստվարաթղթից, որոնց մեջ դրվում է մետաղյա սուպինատոր: Միջատակը վերնամասի հետ միանում է սոսնձման եղանակով՝ բարձր ճնշման տակ: Կոշիկը ներսից ամբողջությամբ, ներդիրի վրադիր շերտը ինչպես նաև երեսամասի ներսի հատվածը մշակված են կաթնագույն կամ սև գույնի մեշենից: Կոշկաքիթը ուժեղացված 1.3-1.5մմ հաստությամբ ջերմապլաստիկ նյութից, կրնկամասը կոշտ 1.5-1.7մմ հաստությամբ ջերմապլաստիկ նյութից: Կոշիկի տակացուն պոլիուրետան հումքից /տակացուի արտաքին տեսքը համաձայնեցվում

					է Պատվիրատուի հետ/: Սպայական կոշիկների խմբաքանակի մինչև 10 տոկոսի չափը նախատեսվում է բարձր սպայական անձնակազմի համար, որոնց դեպքում պահանջվելու է անհատական կար: Բարձր սպայական անձնակազմի համար կոշիկի արտաքին տեսքը կարող է տարբերվել, իսկ ներբանը պատրաստվելու է կոժվալոն հումքից՝ հավաքովի կրունկներով: Կոշիկը՝ տակամասում պետք է ունենա դրոշմ, դրոշմի վրա պետք է նշված լինի չափսը, ներսի մասում նշված լինի մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղի մեջ 20-24 զույգ: Արկղերի վրա պետք է տպագրված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման

					համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ, որից հետո պատվիրատուն մատակարարին տրամադրում է կոշիկի քանակները՝ ըստ չափսերի: Պատվիրատուի պահանջով Մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի մատակարարվող ապրանքի՝ տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին լաբորատոր փորձաքննության եզրակացություն՝ տրված ՀՀ պետական հավաստագիր ունեցող լաբորատոր փորձաքննական կենտրոնի կողմից:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-23/22 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
15					